Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը շնորհավորական ուղերձ է հղել Ազգային անվտանգության մարմինների աշխատողի օրվա առթիվ

08.01.2025

«Հայաստանի ազգային անվտանգության մարմինների հարգելի՛ աշխատողներ, Ջերմորեն շնորհավորում եմ մասնագիտական տոնի կապակցությամբ: Ազգային անվտանգության ծառայությունը մեր պետականության անվտանգ գոյության ապահովման կարևորագույն կառույցներից է, և մենք բարձր ենք գնահատում ձեր դերն ու նշանակությունն այդ առաքելության իրականացման գործում:

Տասնամյակների ընթացքում անվտանգության մարմիններն անցել են լրջագույն փորձությունների միջով, թրծվել են տեսանելի և անտեսանելի ճակատներում, ձևավորել են ավանդույթներ և կուտակել անգնահատելի փորձ: Համոզված եմ, որ այսուհետ ևս դուք պատվով և մասնագիտական բազմակողմանի կարողություններով շարունակելու եք ձեզ վստահված առաքելությունը: Կրկին շնորհավորելով տոնի կապակցությամբ՝ մաղթում եմ ձեզ քաջառողջություն, մտքի ու բազկի կորով և նոր ձեռքբերումներ՝ ի շահ Հայաստանի ժողովրդի և մեր պետության»: